մի բան ուտում կամ խմում է, լեզուն մաքրում է եւ աւելի կարմիր գոյն է ստանում: Այդ պատճառով մենք ամէն առաւօտ ոչ միայն ոչինչ չէինք ուտում, բայց մինչեւ անգամ վախենում էինք երեսներս լուանալու ժամանակ բերաններս մաքրել ջրով, որ չիցէ թէ մեր լեզուի ճերմակութիւնը սրբուի, եւ վարժապետը ասէ, թէ ծոմը լուծել ենք...: Եւ այսպէս, մինչեւ կէսօր մենք պարապում էինք բոլորովին սոված փորով. գլուխներս պտտւում էր, աչքերիս առջեւը սեւանում էր քաղցածութիւնից, դարձեալ ոչինչ չէինք կարողանում սովորել:

Մեր ժամացոյցը պատի ստոերն էր, որը գետնի վրայ մինչեւ մի նշանակեալ խազ հասնէր, գիտէինք թէ արդէն կէսօր է: Այն ժամանակ միայն թոյլտուություն էինք ստանում ճաշելու: Բայց որքա՜ն անհամբերութեամբ սպասում էինք, մինչեւ ստոերը հասնում էր խազին...: Կարծես, արեւն էլ մեր վարժապետի նման սիրտ չունէր. նա միշտ դանդաղ եւ դանդաղ էր գնում, եւ ստոերը խիստ թոյլ կերպով էր տարածւում...

Ճաշը ուտում էինք դասատան մէջ: Աշակերտները իրենց հետ էին բերում բոլոր պաշարը եւ անուշ պատառներից բաժին էին հանում տէր հօր համար, այնպէս որ, նրա մասը աւելի ճոխ էր լինում եւ բազմատեսակ, մինչեւ անգամ երեցկինն ու նրա որդիքն էլ կերակրւում էին տէր հօր սեղանից:

Ճաշից յետոյ, թէեւ մենք ունէինք մի քանի հանգստութեան ժամեր, բայց սաստիկ արգելուած էին խաղերը: Խաղը համարւում էր մեզ համար մի տեսակ չարութիւն, որ ընդդէմ էր համեստութեան եւ հանդարտութեան կանոններին: Աշակերտը պէտք է լինէր լուռ, անշարժ, ամօթխած եւ խոնարհ: Այդ պատճառով սաստիկ պատժւում էր աշակերտը, երբ նրան նկատում էին խաղալիս, աւելի վատթար, երբ նրա մօտ գտնում էին խաղալիքներ: Այդ մասին երբեմն դպրոցում անակնկալ խուզարկութիւններ էին լինում, աշակերտների գրպանները որոնում էին:

Հարուստների որդիքը բացառութիւն էին կազմում դպրոցի խիստ կարգապահութեան մէջ. նրանց շատ բան ներւում էր. դասատան մէջ առաջին տեղումն էին նստացնում, իսկ դրսում նրանք անպատիժ էին մնում, երբ ծեծում էին իրանց աղքատ ընկերներին: Այսպիսիներից մէկն էր Ալօ անունով մի տղայ, որ մեր քաղաքի առաջին հարստի որդին էր. նրա հայրը արքունի փողերանոցի կապալառու էր: Այն ժամանակ Պարսկաստանի գլխաւոր քաղաքներում դրամներ էին կտրում եւ կտրելու իրաւունքը կառավարութիւնը կապալով տալիս էր մասնաւոր անձինքներին: Ալոյի հայրը Խոյ քաղաքի փողերանոցի պետն էր, եւ այդ արտօնութիւնը սերունդից սերունդ, որ-